ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կոնդակ Շուլաւէրի գործակալ Սահակ քահանայ Իսահակեանի անունով, որով, Թիֆլիզի թեմի ժամ. կառավարչի միջնորդութեան համաձայն, շնորհուեց նրան աւագ քահանայութիւն։ 26 սեպտ. թ. 1081.

Կոնդակ Սուխումի գործակալ Եղիշէ քահանայ Տէր Եղիազարեանի անունով, որին, նոյն ժամ. կառավարչի միջնորդութեամբ, արծաթեայ ոսկեզօծ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց. 26 սեպտ. թ. 1082։

Կոնդակ Ղազախի բ. մասի գործակալ Մարտիրոս քահանայ Տէր Յարութիւնեանի անունով, որին նոյնպիսի լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց, թեմի ժամ. կառավարչի միջնորդութեան համաձայն։ 26 սեպտ. թ. 1083։

Կոնդակ Ղազախի ա. մասի գործակալ Զաքարիա քահանայ Ապրէսեանի անունով, որին, Թիֆլիսի թեմի ժամ. կառավարչի միջնորդութեան համաձայն, կամիլաւկա գըլխարկ կրելու իրաւունք շնորհուեց։ 28 սեպտ. թ. 1104։

Կոնդակ Աղնախի Արշակ քահանայ Տէր Ստեփանեանի անունով, որին, Տփխիսի թեմի ժամ. կառավարչի և Աղնախի քաղաքացիների միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց։ 28 սեպտ. թ. 1105։

Կոնդակ շնորհունակ Եփիմէ սարկաւագուհու անունով, որին Տփխիսի թեմի ժամ. կառավարչի և մայրապետի միջնորդութեան համաձայն, առանց Փրկչի ձուլածոյ պատկերի լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 1 հոկտ. թ. 1121։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 607. Հոկտեմբերի 19-ին Սինոդը Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի հոկտ. 6-ի թ. 1135 կոնդակի համաձայն, կարգադրեց. նախ՝ արձակել Տ. Սիոն վարդապետ Տէր Մանուէլեանին Մ. Ամոռի հիւրընկալու-

թեան պաշտօնից և այժմ նշանակել նորան Հին Նախիջևանի փոխանորդ, նորա տեղը հիւրընկալ նշանակել ժամանակաւորապէս Տ. Աբէլ աբեղային, երկրորդ՝ Տ. Իսահակ վարդապետ Տէր Միքայէլեանին արձակելով Խրիմի ս. Խաչ վանքի վանահայրութեան պաշտօնից՝ նշանակել Ախալցխայի փոխանորդ, որոշեց. նախ՝ պատուիրել Տ. Սիոն վարդապետին յանձնել, իսկ Տ. Աբէլ աբեղային ստանալ Մ. Աթոռի հիւրատան գոյքը օրինական կարգով և տեղեկութիւն տալ Սինոդին, երկրորդ՝ պատուիրել Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդին կարգադրել ստանալ Տ. Իսահակ վարդապետից Խրիմի ս. Խաչ վանքի շարժական և անշարժ գոյքը մինչև նոր վանահայր նշանակելը, երրորդ պատուիրել Երևանի կոնսիստորիային կարգադրել տալ Տ. Սիոն վարդապետին ճանապարհածախք ս. Էջմիածնից մինչև Հին Նախիջևան վիճակի արդիւնքից և պաշտօնը ստանձնելու օրից՝ փոխանորդական ռոճիկ ամսական մի հարիւր ռուբլի, չորրորդ՝ պատուիրել Վրաստանի հայոց կոնսիստորիային կարգադրել տալ Տ. Իսահակ վարդապետին ճանապարհածախք ս. Խաչ վանքից մինչև իւր նոր պաշտօնատեղին վիճակի արդիւնքից, պաշտօն ստանձնելու օրից փոխանորդական ռոճիկ՝ ամսական 100 ռուբլի և հինգերորդ՝ պատուիրել Մ. Աթոռի գանձապահին կարճել Տ. Սիոն վարդապետի միաբանական ռոճիկը ս. Էջմիածնից մեկնելու օրից։

Թ. 610. հոկտեմբերի $^{22}/_{25}$-ին Սինոդը Նորին Վեհափառութեան հոկտեմբ. 11-ի թ. 1203 կոնդակի համաձայն կարգադրեց, նշանակել Տ. Երեմիա վարդ. Ստեփանեանին Կարսի փոխանորդ. և որոշեց. նախ՝ պատուիրել Տ. Երեմիա վարդապետին յանձնել և Տ. Եսայի վարդապետին ընդունել ժամանակաւորապէս ս. Գայիանէի վանքի գոյքը, օրինական ցուցակով, երկրորդ պատուիրել Երևանի կոնսիստորիային ա) կարգադրել տալ Տ. Երեմիա վարդապետին ճանապարհածախք, վիճակի արդիւնքից, ս. Էջմիածնից մինչև Կարս և փոխանորդական ռոճիկ՝ ամսական մի հարիւր ռուբլի պաշտօնը ստանձնելու օրից, կարճելով այդ օրուանից Կարսի հոգևոր կառավարութեան նախագահող Տ. Մի-

նաս ա. քահանայի ռոճիկը և ազատ համարելով նորան նախագահողի պաշտօնից, թողնելով կառավարութեան անդամի պաշտօնում. բ) կարգադրել յանձնել Տ. Երեմիա վարդապետին Կարսի փոխանորդական գործերը և գոյքը և երրորդ՝ պատուիրել Մ. Աթոռի գանձապահին կարճել Տ. Երեմիա վարդապետի միաբանական ռոճիկը ս. Էջմիածնից մեկնելու օրից։

Թ. 614. 22/25-ին հոկտեմբերի Սինոդը լսեց Տ. Գարեգին վարդապետի հոկտ. 10-ի յայտարարութիւնը, որով ներկայացնում է իրան ի պահ յանձնած 400 ռուբլի Մ. Տաճարի պատկերները տեղաւորելու ծախքը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին 300 ռուբլին յանձնել Տփխիսի առևտրական դրամատան Երևանի բաժինը մի տարի ժամանակով, որից յետոյ այդ գումարը ևս կիւլպէնկեանի նուիրած 500 ռուբլու հետ միասին գործադրուելու է Մայր Տաճարի պատկերները իրենց տեղը դնելու համար։

Թ. 621. հոկտեմբերի 26/27-ին Սինոդը լսեց Նոր Նախիջևանի ա. կարգի վաճառական Յովհաննէս Մարտիրոսեան Շապոշնիկեանցի հոկտեմբեր 2-ի յայտարարութիւնը Գէորգեան հոգևոր ճեմարանին 500 ռուբլի նուիրելու մասին. որպէսզի հնարաւոր լինի այդ գումարով ձեռք բերել հայ ազգի անցեալ և ներկայ կեանքի վերաբերեալ ամեն տեսակ ուսումնասիրութիւններ բոլոր լեզուներով. որոշեց. նախ՝ պատուիրել Մ. Աթոռի գանձապահին յանձնել հոգևոր ճեմարանի վարչութեանը Շապոշնիկեանցի նուիրած 500 ռուբլին, և երկրորդ՝ ուղարկելով Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի անունով մատուցած Շապոշնիկեանի գրութիւնը, յանձնարարել ճեմարանի վարչութեանը գործադրել դրամը համեմատ նուիրաբերողի կամքի և Նորին Սրբութեան մակագրական հրամանի, և գործադրութեան մասին տեղեկութիւն տալ նուիրատուին։

—※ ※—